№№ 8 – 9 ՕԳՈՍՏՈՍ – ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ №№ 8—9.

Մանկիկին (*ոտանաւոր*). Տիկ. Չ. Կուրղինեան: Մանուկ-ների երեկոյթը. (*անգլիերէնից*): Ստուց. Ս. Զոհրաբեան: Եր-կու բառեկամ (*Ռուդի*). Տիկ. Զ. Չիլինկարեան: Ծաղիկների մէջ (*Էմիլ Տիբօ'ի*). Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց: Մեծ եւ փոքր Մասիս (*ոտանաւոր*). Սիմ. Պապիեան: Ուշկալ Սուրէ-նը. (*պատկեր*): «Էս էլ ես հիմ ու խաչ». Գր. Աղաջա-նեանց: կեռակրում են խուռակին (*պատկեր*): Չինաւուրց կաղնու զոյգնեը (*վոխադրութիւն*). Զ. Տէր-Գրիգորեան:

Զ ա ր ճ ա լ ի ք

Հանելուկներ: Հանելուկների բացատրութիւնները:

Ներկայ №-ի հետ ուղարկւում է Աղբիւրի ութերորդ յաւելուած-պատկերը—իմացէք ի՞նչ ունեմ քազգրած:

ԱՂԲԻՒՐ

ՊԵՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԵՆԿԱԿԱՆ ԸՄՍԵՓԻՒ

յաւելուածով դաստիարակների համար

XIX ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901 Թ.

ԹԻՓԼԻՍ
Տպարան Կ. Մարտիրոսեանցի. ||| Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1|2.
1901

Дозволено цензурою. Тифлисъ, 30 го сентября 1901 г.

ՄԱՆԿԻԿԻՆ

—

Պայծառ ճակատով
Ծիծուն քին ժպիտ,
Ամուշիկ քնով
Քնած է մանկիկ.
Խաղաղ է բունը
Անդորր է հնչուն

Առաւել շրթունքը
Երբեմն ձմռւմ.
Վերան նայելիս
Միշտ կըմռնաս.
Ձայնը լսելիս՝
Ապրել կըցանկաս։

Տիկ. Ջ. ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՐԵԿՈՅԹԸ

—

(Անգլիերէնից)

Տաք դահլիճում ժողովել են փոքրիկները՝ Վահանը, Շուշիկը, Արամը, Հռիփսիկը, Սըմբատը, Ներսէսը և Մանիչակը։ Ֆաշ տուին մէջ տեղ վեց աթոռ, չուրջը պար պէտք է բռնէին։

„Բայց ո՞վ է մեր նուագածուն“։

— Ե՛ս, ես, կոչեց խաժիկ Շուշիկը։

„Ո՛չ ես“, բողոքեց Վահանը։

Ուրանք ինչ արին, չարին, բայց մեր ճչան

Վահանիկը վերջը տարաւ յաղթանակը։ Մի կըլորիկ բարձր աթոռ դաչնամուրի մօտ քաշ տըւին և Վահանիկին առաջ-փառաջ բարձրացրին նրա վրայ։ Վահանիկի փոքրիկ մատները սկսեցին արագ-արագ կլաւիշները չանկռտել։ Դէսից դէնից մի եղանակ, կարծես թէ նա յարմարեց-

րեց և ահա միւս երեխաները չուրջը կանգնեցին ձեռք ձեռքի տւած։ Սկսեցին պարել, երգել։ Երբեմն նրանք վազվազ քանդում էին իրանց չղթան, աթոռների վրայ թռչում։ Բարձրացաւ մի սաստիկ փոշի. քայց նրանք ո՛ւմից վախ ունէին, տանը մեծերից ոչ ոք չըկար։

Վերջացաւ պարը, Վահանիկը ցած իջաւ իր ամբիոնից. հիմա մի նոր խաղ. եօթն էին նրանք, իսկ աթոռները ընդամենը վեց։ Մէկի նշանով

նրանք բոլորը վազեցին միանգամից պէտք է բռնէին իրանց համար տեղ. և բարձրանում էր մեծ իւրաքանչիւրը, երբ վեց աթոռը բռնւած ժամանակ եօթերորդ տղան ծնում էր կանգնած։

ԱՇՆԱՆ

—

Լրել է ամեն տեղ խորին տխրութիւն. կարծես բնութիւնից ձանձրացած լինին: Յորդառատ տեղատարափների պատճառով դուրսը ոչինչ չի կարելի անել. Թանձր մառախուղը ծածկել է ամեն բան և դաշտալին սարսուռիչ քամին շառաչելով ու սուլելով անցնում է անցորդի մօտից, և նրա այդ յուսահատ շառաչների մէջ լսւում է. «Պատսպարւեցէք, ահա գալիս է»: Նրա ձայնին ընդդիմացող չըկայ և ամեն մի կենդանի՝ թէ մարդ, թէ անասուն, շտապում է իր պատսպարանը:

Արդէն մի ամիս առաջ, երբ դեռ բնութեան մէջ փոքր ի շատէ կենդանութիւն էր տիրում, չլող թռչունները թռել էին դէպի Հարաւ, և այժմ չի լսւում ո՛չ սոխակի երգը և ոչ էլ ծիծառի ծւծւոցը, և մենք, ինչպէս երազ, յիշում ենք գարնան ու ամառւան աստեղազարդ երկնակամարն ու Հիանալի, կախարդիչ գիշերները, երբ նստած ծառերի տակ այնպիսի մեծ ախորժակով լսում էինք թռչունների երեկոյեան մաղթանքը. կարծես այժմ էլ մեր ականջներին Հասնում են թռչունների ձայներ, բայց աւ՜ազ, դրանք ուրախ երգասացութիւններ չեն, երեկոյի ու առաւօտեան մաղթանք չեն, այլ ագռաւների ու ճնճղուկների կռնչիւնն ու ճւճւոցը: Խեղճ կենդանիները, նրանց ձայնից պարզ կարելի է դուշակել, թէ նրանք էլ, ինչպէս

մարդիկ, յուսահատել են ձմեռւայ գալուստից. չէ՞ որ ձիւնը պիտի ծածկէ ամեն բան և ինչո՞վ պիտի կերակրուեն։

Երկնակամարն ամբողջովին պատած է թանձր ամպերով։ Այլ ևս առաջւայ նման չի փայլում արեգակը, նրա ոսկեփայլ ճառագայթներից զրկւած են։ Նա մերթ ընդ մերթ ամպերի ճեղքւածքից նայելով՝ կարծես ուզում է իր վերջին հրաժեշտը տալ երկրին։

Անտառն էլ սգաւորի նման փոխել է իր կանաչ հագուստը. սգազգեստ է հագել և էլ չէ ընդունում յոգնած անցորդին իր հովանու տակ։ Այնտեղ պատսպարւում են միայն նրբանք, որոնք ուրիշ ապաստանարան չունին. բայց այդ ապաստանարանն էլ շատ գոհացուցիչ չէ, այնտեղ էլ է հասնում գուժարեր հողմի սարսռեցուցիչ վայրը, լացն ու կոծը և աւելի ևս տխուր, քան թէ բաց դաշտում։

Գիշերները լուսինն այնպէս չէ լուսաւորում, ինչպէս առաջ, և մեզ թւում է, թէ նրա կաթնանման ճառագայթները սառել են նոյն իսկ եթերքում։

Տխուր է ամեն ինչ. թէ՛ շնչաւոր և թէ անշունչ, կարծես ամենքն էլ կորցրած լինին մի ինչ որ թանգագին իր, որի կորուստը զգալի է նոյն իսկ բնութեան։

Ս. ՉՈՒՐԱԲԵԱՆ

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ

—

(Ուշից)

Այս աղմուկի միջոցին ոչ ոք չընկատեց, թէ ինչպէս Ռուֆֆոն իր ընկերին կրծքին սեղմած թատրոնից դուրս վազեց։ Երեխան կարծում էր, թէ շունը ուշաթափւել է և վազելով տարաւ նրան անասնաբոյժի խանութը։ Սա մի քանի օր ուռաչ շատ էր Հաւանել Ռուֆին և ափսոսացել էր, որ այդպիսի լաւ ցեղի շուն ներկայացումներ է տալիս։

—Ա՜խ, պարոն, խնդրեմ նայեցէք, ճչաց երեխան ներս վազելով.—Չար մարդը խփեց նրան փայտով, խնդրում եմ, խընդրում, նայեցէ՛ք, օգնեցէ՛ք նրան։

Անասնաբոյժը շտապով ակնոցները դրեց աչքերին, մօտեցաւ և նայեց շանը։ Ռուֆֆոն սեղմել էր նրան իր կրծքին։

—Ա՜յ, այ ափսո՜ս, տխուր ձայնով ասաց նա. իմ խեղճ փոքրիկս, քո շնիկը մեռած է։

—Մեռա՞ծ է...

—Ի հարկէ, նայիր այստեղ, ասաց նա զգուշութեամբ ձեռք տալով կտրուած դանդին։ Ո՞վ խփեց, այ քեզ դազանութի՜ւն։

—Մեռած է... անմիտ կերպով կրկնեց երեխան։

Խեղճը չէր հասկանում ինչ է պատահել. նա տեսաւ որ Թուֆը սաստիկ հարւած ստացաւ, բայց չէր կարծում թէ դա մահ կըպատճառէր: Ձան մարմինը դեռ տաք էր և աչքերը բաց: Ապշած ու լուռ կանդնել էր Թուֆիոն, սեղմելով շանը իր կրծքին:

Երիւնը կաթկաթում էր նրա շապկի վրայ:

—Այդպէս մի նայիր, փոքրիկ,—ասաց ծերունին փաղաքշանքով.—խեղճ շունը անկասկած մեռած է, բայց դու մեղաւոր չես: Ո՞վ արեց այդ:

Թուֆիոն չէր պատասխանում և մինչև անգամ կարծես թէ չէր լսում: Նրա հայեացքը անշարժ յառած էր տարածութեան մէջ, իսկ ղէմքը մեռելայինն էր ստացել:

—Թող շանդ մարմինը ինձ մօտ—ասաց ծերունին քընքշաբար.—լմ տան մօտ պարտէզ կայ, ես կըթաղեմ շնիկիդ ծառի տակը. դու ինքդ կարող ես փոս փորել, եթէ ցանկանում ես:

Թուֆիոն դարձեալ ոչինչ չէր հասկանում և իր կրծքին էր սեղմում Թուֆի արիւնոտ գլուխը:

—Տես, դու արիւնոտեցիր շապիկդ, ասաց անասնաբոյժը.—ինչ պատահեց քեզ, տղաս, մի վշտանար այդպէս, քեզ ուրիշ շուն կըտան: Գնանք ինձ հետ պարտէզ: Նա երկարացրեց ձեռքը որ վերցնէ շանը. բայց երեխան սարսափով յետ քաշուեց:

—Ձեռ մի՛ տաք, եթէ ոչ կըսպանեմ ձեզ, շշնջաց նա սեղմած ատամների միջից: Մի ակնթարթում դուրս վազեց և անյայտացաւ այնպէս արագ, որ անասնաբոյժը մնաց զարմացած:

Թուֆիոն վազեց նեղ փողոցով: Ոչ ոք չըտեսաւ նրան, որովհետև բոլորը գործի էին գնացել: Սկզբում նա սաստիկ արագ էր վազում, յետոյ հետզհետէ դանդաղացրեց քայլերը, բայց գնում էր առանց կանգնելու: Նա գրկել էր Թուֆի մարմինը, արիւնաթաթախ գլուխը դրել էր իր ուսին:

Նա գնում էր ու գնում. դուրս եկաւ քաղաքից, հասաւ արտերին, բայց ոչինչ չէր նկատում և շարունակ գնում էր,

չընայելով որ յոգնել էր և ոտքերը ցաւում էին։ Յոգնածութիւն չէր զգում, զգում էր միայն, որ Ռուֆը մեռել է, և որ ինքը մենակ է մնացել։ Նա փախչում էր այդ անգութ քաղաքից, այն չար մարդկանցից, որոնք սպանեցին Ռուֆին, և ուզում էին խլել և թաղել հողի տակ։

Մի քանի հնձուորներ նկատեցին նրան.—Այս ինչ տարօրինակ երեխայ է. ասաց նրանցից մէկը. միւսը պատասխանեց —չես տեսնում, նա տանում է շանը գետի մէջ խեղդելու։ Նրանք չընկատեցին, որ շունը մեռած է։

—Շատ տարօրինակ է, կրկնեց առաջինը և նորից ըսկսեցին իրանց գործը։

Ռուֆֆոն որոշ նպատակ չունէր։ Նա գիտէր միայն, որ Ռուֆը մեռել է և նրա մարմինը ուզում էին խլել իր ձեռքից։ Փախչում էր կարծելով թէ չար մարդիկ յետևից գալիս են։ Նա չէր մտածում, թէ ո՞ւր է գնում, ինչ է անում, կամ ինչ պիտի անէ։ Նա միայն ուզում էր փախչել իր Ռուֆի հետ, փախչել անգութ մարդկանցից։ Փոքրիկ երեխան յոգնից, նա դժւարութեամբ էր առաջ գնում։ Վերջապէս ճանապարհը վերջացաւ, դաշտերից ու արտերից շատ հեռացաւ։ Յանկարծ նա տեսաւ մի մեծ փայլուն կապոյտ տարածութիւն։ Սա ծովն էր։ Եղանակը շատ խաղաղ էր և ջուրը սովորականից աւելի պարզ։ Այն օրից, երբ Ռուֆֆոին բերին Անգլիա, առաջին անգամ նա տեսաւ այսպիսի մեծ ջուր, նա մոռացաւ իր մանկական յիշողութիւնները, իր հայրենիքը։

—Էկկոմի՛, էկկոմի՛, *) բացականչեց նա իր վաղուց մոռացած մայրենի լեզուով։ Նա եկել է ծովի մօտ, մի՛թէ ծովը չի տանի նրան այնտեղ, հայրենիք։

—Այո՛, դէպի ծովը—այնտեղ է ազատութիւնը։ Ծովը կըտանի նրան տուն!

Սղմելով իր կրծքին Ռուֆի մարմինը, նա վազեց դէպի

*) Էկկոմի իտալերէն նշանակում է «ահա ես»։

ծովի ափը, մտաւ ջրի մէջ և արագ արագ շարունակեց առաջ գնալ։

—Ահա ես, ահա ես, նորից բացականչեց նա և պինդ սեղմելով կրծքին իր սիրելի ընկերին, գնաց առաջ, առաջ և առաջ դէպի ծովի խորքը...

Ծովը կարեկցութեամբ ընդունեց երկուսին էլ իր ծոցը...

Արևն էլ չբաժանեց նրանց!...

Տիկ. Զ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ԷՄԻԼ ՏԷՒՕ

ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ՄԷՋ

Փերուկ այգեպանի պատմութիւնները

XVII

ԱՆՆԻԿԻ ԲԱՆԱՁԱՐԱՆՈՑԸ

Անիկը մի շաբաթ էր, որ տանը նստած՝ կոկորդը ցաւում էր և մայրը չէր թողում, որ դուրս գայ այգին. նա շատ ձանձրացել էր և սպասում էր անհամբեր, երբ Արշակի ու Նիկողայոսի հետ դարձեալ կըվազվզէր ծառուղիներում։

Նրան աւելի ևս քաշում էր այգին, ուր ինչպէս լսել էր, Յովակիմը մի ինչ որ բան էր շինում որ իր առողջանալուց տեսնէ, ուրախանայ։

Վերջապէս վերցրին նրանից անտանելի փաթեթները, տփին ճարի վերջին գդալը և երկրորդ օրը թողլ տփին որ կարճ միջոցով գնայ այգին։

Աննիկին այնպէս թւաց թէ արևը երբէք այնքան պայծառ չէր լոյս տել, թռչուննները այնպէս բարձր չէին երգել, ինչպէս այդ օրը, երբ մի շաբաթւայ բանտարգելութիւնից յետոյ՝ կրկին կարաց բաց օդում վազվզել, թռչկոտել։

Այդում մի ուրիշ ուրախութիւն էլ էր նրան սպասում. Յովանոցի ետևը ընկած դատարկ հողը, ուր ժանգալներ էին բը-

սել՝ մաքրուել, մի շաբաթուայ մէջ փոխուել էր, գեղեցիկ բանջարանոց դարձել։

Աննիկը իր աչքերին չէր հաւատում։ Ջատ ածուներ էին ամեն ուղղութեամբ ձգուել դոմանոցի պղպի հետ խառն սևահողից։ Այդ ածուներից մի քանիսն էլ շուշանների տակ ծածկուած էին, որոնք պսպղում էին արևի տակ։

Բանջարանոցի բոյսերի, այն է վարունգի, սալաթի, ծնեբեկի, բողկի և գաղարի մատաղ ծիլերը բարձրացել էին և ածուների չորս կողմը տնկած բազմատերև ու փուճած կազամբներին ուշ էլ չէին դարձնում։

Ջուշի քրտնած ծածկոցների տակ տեսնում էր անուշահամ սեխի ու հիւթալի ձմերուկի կոլոր տերևները։

Աննիկը այս ամենը տեսնելով՝ վազեց դէպի այգեպանի տնակը և նրա կոշտացած ձեռքը բռնելով՝ քաղցրութեամբ ասաց.

—Սիրելի Յովակիմ, շնորհակալ եմ, ինչպիսի գեղեցիկ բանջարանոց ես շինել, այդպիսին ոչ ոք չունի։ Եւ ինչպէս լաւ տեղ ես ընտրել, արևահայեաց, քամիներից պաշտպանուած։ Իսկ ես զարմանում էի թէ ինչու թողնում ես որ այդ գեղեցիկ տեղը ժանգալները կոխեն։ Թէ ինչքան ուրախ եմ, բերանով չեմ կարող ասել։

Օրերը մխանման տաք ու բարեբեր էին — բուսական թագաւորութեան մէջ ամեն ինչ աճում ու ծաղկում էր։

Աննիկը օրւայ մեծ մասը անցնում էր Յովակիմի հետ բանջարանոցում, իր բոլոր խաղալիկները Նիկողայոսին ու Արշակին թողնելով, որոնք այժմ իրանց կուշից չհասոյ թունդ բարեկամացել էին։

Մի սաստիկ տաք ու տօթ օր, որը Կովկասում չաճախ է պատահում, Աննիկը այդքին դուրս եկաւ և չընայելով շատ վաղ էր, տեսաւ որ Յովակիմը բանջարանոցում բանում է։

Աննիկը նրան վախեցնելու մտքով նրա ետևի կողմից թաքուն մօտեցաւ, թէև ծերունին լաւ էլ տեսնում էր նրան,

բայց այնպէս ցոյց տաւ, ուր իսկի չէ էլ նկատում։

— Բա՜հ։

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վեր թռաւ այգեպանը, ա՛խ ինչպէս վախեցրիր, ես էլ ասեմ ո՞վ է ՏԷր Սոսուածծ։

— Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, ծիծաղեց Աննիկը, իր հնարի վրայ ուրախացած. ինչպէս էլ վեր թռար։

Յովակիմը կրկին կռացաւ բանելու աճւի վրայ, որ մինչև Աննիկը գալը մաքրում էր ժանգալներից։

— Այս ինչ ծաղիկներ են. կանչեց նա աճւին նայելով, որի վրայ փռւել էին սեխի մատաղ թաղերը լայն ու դեղին ծաղիկներով։

Ծերունին ժպտաց։

— Այդ սեխի ծաղիկներն են, ա՛յ տեսնենք, օրիորդ, ո՞րի աչքերն են սուր, իմը թէ ձերը։ Նայեցէք այս ծաղիկներին և ասացէք ինչ զանազանութիւն էք գտնում դրանց մէջ։

— Ես ոչինչ չեմ տեսնում. դրանք ամենքն էլ միատեսակ են։

— Ապա մի լաւ նայեցէք այս երկու ծաղիկներին, որոնք մի շիւի վրայ շարքով բսած են։

Աննիկը ուշադրութեամբ նայեց նրանց և ուրախ ձայն տւաւ. սրանցից մէկի տակին մի խոռ կայ, միւսին չըկայ։

— Ձեր աչքերը սրատես են. նկատեցէք, օրիորդ, որ այն ծաղիկներն են մեզ պտուղ տալիս, որոնց տակը խոռ կայ. իսկ որոնք չունին, ծաղկում են ու թափւում։

— Ի՞նչու։

— Ահա շուտով կիմանաք, ապա նայեցէք նրանց ներքին մասին։

Աննիկը մէկի և միւսի ծաղկաթերթերը պոկելով՝ համոզւեց որ այն ծաղիկները, որոնք ներքևի մասում խոռ չունին, միմիայն առէջներ չունին, այլ ունին սանդհար ու ձւաբան, որը և կազմում է ծաղկի այդ խոռը։

— Դու ասել ես որ բնութեան մէջ անպէտք բաներ չը-

կան, իմ կարծիքով աւէչքաւոր ծաղիկները բոլորովին անպէտք են. ասաց Աննիկը։

—Դուք սխալւում էք. եթէ ես այժմ առէչք ունեցող ծաղիկները կտրեմ, պտուղ բերող ծաղիկները չէին մեծանալ և սեխ էլ չէին տալ, պատասխանեց Ծերունին։

—Ի՞նչու։

—Յիշում էք, ինչ որ առաջ ասել եմ. առէչքները նրա համար են, որ իրանց ծաղկափոշին հասցնեն սանդհարի ծայրին գտնւած կնճիթին։

—Յիշում եմ։

—Ուրեմն եթէ աւէչքաւոր ծաղիկները պոկենք, նրանք անկարող են ծաղկափոշին հասցնել պտղաբեր ծաղիկներին, որոնք ունին սանդհար ու ձւարան։

—Միթէ առանց ծաղկափոշուն ձւարանը չէ կարող պըտուղ առաջացնել։

—Ո՛չ, չէ կարող։ Գիտէք ինչ վորձեր են արել. մեւնոյն ճիւղի վրայ գտնւած բոլոր աւէչքաւոր ծաղիկները պոկել են և մաքուր թղթի վրայ թափ տւել։ Հաւաքւած ծաղկափոշին կրկին տարել են այգին և վրձինի օգնութեամբ ըզգուշութեամբ թաթախել սանդհարների կնճիթը։ Եւ երևակայեցէք, այն ծաղիկները, որոնց վրայ ընկել է այդ պտղատու փոշին, նրանք սեխ են տւել, իսկ որոնց չեն թաթախել, կոճակ չեն բռնել, ոչինչ էլ չեն տւել։

—Իսկ ես կարծում էի որ աւէչքներն ու սանդհարները միշտ մեւնոյն ծաղկի վրայ են գտնւում. մաքուս էլ էր անցրել, որ դրանք կարող են և դանագան ծաղիկների վրայ գըտնւել։

—Ոչ միայն դանագան ծաղիկների վրայ, մինչև անգամ և դանագան ծառերի վրայ էլ են լինում. նկատեց Յովակիմը։ Օրինակ արմաւենիների, փոտղենու և խուրմի ծառերի աւէչքաւոր ծաղիկները մի ծառի վրայ են լինում, իսկ պտղաբեր ծաղիկները միւսի և պատահում է, որ այդ ծառերն էլ մէկ

մէկից մի քանի վերստ մինչև անգամ հեռի են լինում ընկած:

—Հապա ո՞վ է ծաղկափոշին մի ծաղկից միւսը փոխադրում. հարցրեց աղջիկը:

—Այդ սովորաբար անում է քամին. բայց ծաղիկները ուրիշ օգնականներ էլ ունին, որոնք նոյնպէս ուրախութեամբ այդ պտղատու փոշին փոխադրում են մէկ տեղից միւսը: Ես ձեզ կը պատմեմ թէ իմ անձամբ տեսածները և թէ լսածները:

Մի այգում բսել էր փոտղենին և պտղաբեր ծաղիկներով ծածկւել. նա թէև ծաղկում էր, բայց երբէք պտուղ չէր տալիս և միայն այգու զարդարանքի համար էր ծառայում: Այդեպանը, որ խնամք էր տանում այդ ծառերին, մի անգամ գարնանը զարմանքով նկատեց որ ծաղիկները թափւելուց յետոյ, այդ ծառը կոճակներ էր բռնել: «Երևի մօտակայ տեղերում այդպիսի ծառ են տնկել առէչքաւոր ծաղիկներով», մտածեց ու գնաց որոնելու: Բայց մի քանի վերստ շրջակայքի վրայ ոչ մի տեղ փոտղենի ծառեր չըգտաւ: Միայն յետոյ իմացաւ որ այդտեղից շատ վերստեր հեռու, մի կալւածքում առաջին անգամը նոյնպիսի փոտղենի են տնկել և տւել է առէչքաւոր ծաղիկներ...

—Իսկ ո՞վ է ծաղկափոշին փոխադրել: Միայն քամին կարող էր այդպէս հեռու տանել, հարցրեց Աննիկը:

—Ո՛չ, քամին չէ փոխադրել, այլ ահա այս փոքրիկները և Յովակիմը ցոյց տւեց ոսկեգոյն մեղուին, որ ճարպիկութեամբ ներս էր սրծել ծաղկի բաժակի կամ պսակի ներսը: Նա այժմ մտել է, ասաց Յովակիմը, առէչքների ներքևի մասի մեղրատու խուլերից դուրս հկող մեղրը ծծելու: Այդտեղ ներս սրծնելով մեղուն իր թաւ (խաւոտ, բմբլոտ) մարմնով քսւում է փոշիանօթներին, որոնք նրան անուշահոտ ծաղկափոշով ծածկում են և երբ նա կշտանում է, թռչում է մի ուրիշ ծաղկի վրայ, այնտեղից էլ երրորդի, չորրորդի, միշտ էլ ծաղկի բա-

ժակի ներսը մտնելով. բայց երբ նա մտնում է պտղաբեր ծաղկի ներսը, այդտեղ կամաց կամաց դիպչում է ձւարանի կպչուն կնճիթին, որտեղ թողնում է և իրան քսած փոշու մի մասը:

Դուք տեսնում էք որ ծաղիկները մեղուներին, թիթեռներին և միւս միջատներին ձրի չեն հիւրասիրում իրանց քաղցր հիւթով. այդ բանի համար բոլոր այս թռչկան մժեղներն ու միջատները նրանց մեծ ծառայութիւն են անում, մի ծաղկի ծաղկափոշին միւսի վրայ փոխադրելով: Հաւանական է, որ մեղուներից կամ մժեղներից մին այս ձևով էլ մի փոտղենու պտղաբեր փոշին միւսի վրայ փոխադրած լինի:

—Սիրելի Յովակիմ, չգիտեմ ինչպէս յայտնեմ իմ շնորհակալութիւնը, քո այդ ամեն բացատրութիւնների համար, ասաց Աննիկը. ես քեզանից շատ բաներ սովորեցի:

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՉԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

(Կրշարունակելի)

Մ Ե Ծ

ԵՒ ՓՈՔՐ ՄԸՍԻՆ

Եվ Մասիսը դարեր անհուն
Իր զաւակի մօտ՝ կանգնած՝
Աչքը նրանից չի հեռացնում,
Միշտ նայում է երկիւղած։

Ձատ է սիրում նա փոքրիկին—
Ո՞վ է սիրում նրա պէս.
Ահա, նայիր, հայր-հսկային—
Նա միշտ այդպէս է, այդպէս...

ՍԻՄ. ՊԱՊԻԵԱՆ

Ալիսա Սուրէցը

„ԷՍ ԷԼ ՓԵԶ ՀԻՆԳ ՈՒ ԽԱԶ“

Կատակերգութիւն մէկ արարւածով

—

(Մանկական ներկայացման համար)

—

ԴՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Մայրը—30 տարեկան.
2. Արշակ, որդին—8 տար.
3. Նազիկ, աղջիկը—7 տար.
4. Տիգրան, հարևանի տղան—7 տ.

Բեմը ներկայացնում է մի հասարակ սենեակ, աջ ու ձախ կողմից դռներ: Սեղան և երկու աթոռ. սեղանի վրայ դրած են թուղթ, գրքեր, թանաքաման, նոյնպէս և մրգեղէն:

ՏԵՍԻԼ Ա.

Մայրը եւ Արշակ

Մայրը. (Նստած յատակի վրայ ճախարակ է մանում երգելով).

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիլտակ մալանչներ.
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հագամ իմ ցաւեր:

Տիգրանիկս գուլպայ չունի,
Հանդ է գնում ոտաբաց.
Սրշակս էլ չուխայ չունի,
Միշտ անում է սուզ ու լաց:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սրպտակ մալանչներ.
Մանիր լծելիր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր.

(Վերջին տունը երգելիս մտնում է Արշակը և սեղանի վրքերը քրքրում մինչև երգի վերջանալը)։

Արշակ.—Մայրիկ, նոր տարին մօտենում է, բա ինձ համար նոր շորեր չե՞ս կարելու։

Մայրը.—Նոր շորեր այն ժամանակ եմ կարելու, երբ դասերդ լաւ սովորես, ուշք ու միտքդ գրքին լինի։

Արշ.—Լա՛ւ, վա՛ղ եմ սովորում դասերս։

Մայրը.—Թէ լաւ ես սովորում, ասա ինչո՞ւ Հայոց լեզուից 2 ես ստացել։ (Ընդհատում է ճախարակ մանելը)։

Արշ.—Հաւատացնում եմ, մայրիկ, լաւ եմ սովորում, բայց վարժապետը երկու է նշանակել։

Մայրը.—Սուտ խօսելը մեղք է. վարժապետը ոչ քո խելքին է, ոչ իմ. լաւին՝ լաւ կընշանակի, վատին՝ վատ։

Արշ.—Մայրիկ, հաւատացնում եմ քեզ, որ վարժապետը, պարոն Թորոսեանը, շատ քիչ է նշանակել ինձ։

Մայրը.—Ա՛խ ինչքան կուզէիր, որ դնէր։

Արշ.—Հինգ ու խա՛չ։

Մայրը.—Հինգ ու խա՛չ... իսկ գիտե՞ս, որ Հինգ ու խաչ ստանալու համար ամենալաւ աշակերտը պիտի լինիս դասարանում։

Արշ.—Հէնց ամենալաւ աշակերտն էլ ես եմ։

Մայրը.—Երևում է թուանշանիցդ (կանգնում է)։

Արշ.—Անցեալ օրը պարոն Թորոսեանը ինձ մի ոտանաւոր Հարցրեց. ես էլ այնպէս ասացի անգիր, որ ընկերներիս բերանը բաց մնաց։

Մայրը.—(մի կողմ). Արշակից այդպիսի բան սպասե՛լ. (Արշակին). Յետո՛յ. վարժապետը Հաւանե՞ց։

Արշ.—Այո՛, շատ Հաւանեց և ցուցակում մի ինչ որ բան

գրեց. ասացի՝ վարժապետ, ինչ էք անում, ասաց՝ նշանակում եմ ցուցակում, որ դու ամենատառաջինն աշակերտն ես։

Մայրը.—Յետո՞յ։

Որ.—Էլ ինչ յետոյ. հէնց իմացայ վկայականումս հինգ ու խաչ կըլինի, բայց տեսայ 2 դրած։

Մայրը.—(մի կողմ). Այս անպիտանը իր փոքրիկ տեղովը ուզում է ինձ խաբել. (Որդ.-ին). Ճիշտ լաւ ես սովորում, հա. Հապա ինչո՞ւ ամեն օր անճաշ են թողնում քեզ։

Որ.—Մայրիկ, ամեն օր ինձ երբ են անճաշ թողնում, որ ասում ես։

Մայրը.—Լա՛ւ. ասենք թէ՝ ամեն օր չեն թողնում, երկու օրը մի անգամ հո թողո՞ւմ են։

Որ.—Չո՛, մայրիկ, էդպէս կարող է պատահել, ուսումնարանում մնում եմ, որպէսզի դասս աւելի լաւ սովորեմ։

Մայրը.—Ես լա՛ւը գիտեմ, ինչպէս որ տանն ես, այնպէս էլ ուսումնարանում կըլինես։ (Փողովրդին)։ Անցեալ օրը, ասում եմ, Երշա՛կ, գնա՛ ճուտե՛րին կուտ տուր, շուտ այստեղ արի, դասերդ պատրաստիր. կէս ժամ սպասեցի, մի ժամ սպասեցի՝ չեկաւ, ասացի գնամ տեսնեմ՝ ինչ է անում. գնացի տեսայ՝ հաւի ճուտերը խոհանոցն է արել, մի փայտ ձեռքն առել և խեղճ ճուտերին էստեղ-էնտեղ խփում սպանում, սպանածն էլ մոխրի մէջ թաղում, որ ես չընկատեմ. լաւ է, որ շուտ վրայ հասայ, թէ չէ՝ բոլորին էլ կըկոտորէր. հինգ հատին թաղել էր արդէն, երբ վրայ հասայ։ Ըստաւ դրան մի խելք տայ։ (Երշակին)։ Երշա՛կ, եթէ մի՛ւս անգամ էլ անկարգութիւն անես, չըսովորես, ծուլութիւն անես, իմացած եղիր, որ վարժապետիդ պիտի ասեմ ամեն օր քեզ անճաշ թողնէ. հասկացա՞ր։

Որ.—Հասկացայ, մայրիկ, կաշխատեմ այսուհետ... անկարգութիւն չանել։

Մայրը։—Պէտք է դասերդ էլ պատրաստես։

Որ.—Լա՛ւ, դասերս էլ կըպատրաստեմ, եթէ...

Մայրը.—Եթէ ինչ.

Արշ.՝— Եթէ վարժապետին ասես հինգ ու խաչ դնի։

Մայրը.—Ասենք թէ վարժապետին ասացի, որ քեզ հինգ ու խաչ դնի. ախր իմ ասելով հօ չէի լինելու. դու պէտք է աշխատես ջանասէր լինել, վարժապետիդ բոլոր պատուէրները ամենայն ճշտութեամբ կատարես, դասերդ լաւ սովորես, որ հինգ ու խաչ նշանակի։ Վերջապէս ինչ նշանակութիւն ունի թւանշանը. դու իսօ թւանշանի համար չես գալրոց գնում. գրնում ես որ մարդ դառնաս։

Արշ.—Ախր, մայրիկ, հէնց ասում ես էլ, ախր չէն թողնում դասերս սովորեմ։

Մայրը.—Ո՞վ չի թողնում.

Արշ.—Ճանճերը, մայրիկ, ճանճերը։

Մայրը.—(Ծիծաղ. մի կողմ)։ Աըի ու դրան բան հասկացրու (իրան)։ Եօ, ճանճերը քեզ ինչ են անում որ։

Արշ.—Խանգարում են, մայրիկ։

Մայրը.—(փսփսալով ժող.-ին) Այս անպիտանը միշտ մի «մահանայ» է դնում արդարանալու համար։ (Աըշ.-ին) Ախր, ճանճը ինչ ա, որ ինչ խանգարի։

Արշ.—Մայրիկ, դու նրա պզտիկութեան մի նայիլ, գիրքը հէնց ձեռս եմ առնում թէ չէ, մէկէլ ես տեսնում մի անտէր ճանճ, որտեղից որ է տ՛րզ՛զզ... Գալիս է ու դուզ քթիս ծէրին նստում։

Մայրը.—Ձեռքով խփի՛, գնա կորչի։

Արշ.—Ձեռքով խփում եմ, գնում է ականջիս ծէրին նստում. էնտեղից էլ եմ քշում, գալիս է գրքիս վրայ նստում, էն էլ դուզ դասիս վրայ. ուզում եմ գիրքը ծալեմ ու մէջը ճխլեմ այդ անիրաւ կենդանուն, վէր է կենում վախչում։ Էլի որ դասս սկսում եմ կարդալ, մէկէլ ես տեսնում տ՛րզ՛զզ... եկաւ քթիս ծէրին բազմեց։ (Մօրը). դու լինես իմ տեղը ինչ կանես։

Մայրը.—(փսփ.) Ի՞նչ պիտի անեմ, ամենևին ուշադրութիւն չեմ դարձնիլ։

Ուշ.—Լա՛ւ ես ասում. էն պզտիկ տեղովը գայ ինձ խանդարի, ես թողնեմ նրան անպատճ՛ժ: Ես էլ բարկանում եմ, գիրքը ծալում մի կողմ դնում.—մայրիկ, դիրքը լաւ եմ ծալում որ չըփչանայ—ու ընկնում էդ անիծեալ ճանճերի յետևից. գիտե՞ս, մայրիկ, օրը քանիսն եմ սպանում. միանգամ թաշկինակով զարկելով եօթը ճանճ սպանեցի:

Մայրը.—Օ՛, շատ մեծ քաջութիւն ես արել, բրա՛վո. եթէ ամեն օր ճանճերի հետ պատերազմես, լաւ դաս կըսովորես:

Ուշ.—Հաւատացնում եմ քեզ, մայրիկ, եթէ վարժապետը ինձ 5 դնի, ամբողջ օրը տանը նստած դաս կըսովորեմ:

Մայրը.—Չա՛տ լաւ, Ուշակ, դու խելօք կաց, դասերդ պատրաստիր, ես էլ քեզ եմ հաւատացնում, որ վարժապետը 5 կըդնի:

Ուշ.—Մայրիկ, բա խոկի չըխաղամ:

Մայրը.—Խաղին խո՛ ես հակառակ չեմ. առաջ դասերդ սովորիր, յետոյ ինչքան կուզես՝ խաղա՛, ախր դու ամենևին դաս չես սովորում, ամբողջ օրը խաղի յետևից ես ընկած, միանգամ չըտեսայ քեզ դաս սովորելիս:

Ուշ.—Լաւ, մայրիկ, այսուհետ թէ էլ ինձ տեսնես խաղալիս, ինչ ուզում ես արա՛. 5-ի տեղ 15 անգամ բռունցքով տուր:

Մայրը.—Գիտես որ քեզ չեմ ծեծում, այդպէս ես ասում: Լա՛ւ, այդ էլ կըտեսնենք:

Ուշ.—Ախր, մայրիկ, խաղն էլ շատ լաւ բան է: Գասս սովորելիս մեր Հարևանի տղան—Տիգրանը, մէկել ես տեսնում գալիս է ասում՝ «Ուշակ, արի՛ խաղանք». բա ես նրա խաթրը կոտրե՞մ:

Մայրը.—Ա՛յ որդի, հէնց նոր ասացի որ խաղին հակառակ չեմ, ինչքան կուզես խաղա՛, բայց դասերդ էլ պատրաստիր: Ա՛յ, քեզ օրինա՛լ Նազիկը. ինչո՞ւ նա հայերէնից 5 ունի, իսկ դու 2:

Ուրց.—Բայց նա էլ թուաբանութիւնից է թոյլ, մինչդեռ ես 4 ունիմ։

Մայրը.—Նա աղջիկ է, քեզնից փոքր է, նրան ներելի է, բայց քեզ՝ ոչ։

Ուրց.—Լա՛ւ, մայրիկ, էդպէս որ խօսում ես հա՛, Նազիկը լաւ դիտէ հայերէն, թէ՛ ես։

Մայրը.—Ի հարկէ Նազիկը. նա քեզ պէս ծուլութիւն չի անում, տաճ դասն էլ միշտ պատրաստում է։

Ուրց.—Ես էլ եմ պատրաստում։

Մայրը.—Դէ որ պատրաստում ես, ինչո՞ւ Նազիկի նման չես կարողանում կարդալ։

Ուրց.—Ուրեմն քո ասելով՝ Նազիկը ինձանից լաւ է կարդում։

Մայրը.—Ի հարկէ։

Ուրց.—Այ ասում ես հա՛. դու նրա կողմն ես բռնում, մայրիկ։

Մայրը.—Երկուսդ էլ ինձ համար միևնոյն էք, միայն թէ ես ճշմարտութիւնն եմ ասում։—Լա՛ւ, էդ խօսակցութիւնը թողնենք. ապա վերցրու գիրքը, կարդա՛ տեսնենք։

Ուրց.—(մի կողմ) Բանս խարաբ ա. (մօրը)—Ի՞նչ կարդամ, մայրիկ։

Մայրը.—Գիրքը բաց արա, մի տեղից կարդա՛։

Ուրց.—Մայրիկ, մի բան ասեմ.—անցած օրը ընկերներիցս մինը մի լաւ բան ասաց. ով որ օրը երեք անգամ ասաց, մէկ առաւօտեան, մէկ կէսօրին և մէկել երեկոյեան...

Մայրը.—(շարունակ.) Գաս սովորի, նա լաւ տղայ կրլինի։

Ուրշակ.—Ո՛չ ոչ, մայրիկ, մի լաւ բան։

Մայրը.—Չը, բա՛ ինչ։

Ուրց.—Ով որ, ասաց, օրը երեք անգամ, առաւօտը, կէսօրին և երեկոյեան չամչով փլաւ ուտի, նա գէլից չի վախենայ։

Մայրը.—(դոպիլով ծիծաղը, ժողովրդին) «Գայլի գլխին

աւետարան կարդացին, ասաց՝ շուտ արէք, ոչխարը սարից անց կացաւ։ (Արշ.-ին)։ Տօ, խելօք, ես գայլերի մասին եմ խօսում. ուշ ու միտքդ ո՞րտեղ է.—ասում եմ գերքը բաց արա, կարդա տեսնեմ։

Սրբ.—Ի՞նչ կարդամ է. իսկի մի լաւ բան կայ, որ մարդ բաց անի, կարդայ։

Մայրը.—Մահանագ Աստւած կտրի. էդ ինչպէս է ուրիշների համար կայ, քեզ համար չըկայ։—Բաց արա, մի տեղից կսրդա։

Սրբ.—(Գիրքը թերթում է գլուխը շարժելով) Մայրիկ, էստեղը դժւար է, մի ուրիշ տեղ բանամ։

Մայրը.—Լաւ, համաձայն եմ, ուրիշ տեղ բաց արա։

Սրբ.—(բաց է անում և սկսում կմկմալով կարդալ)։

Մայրը.—Տեսնում ես. կարդալ չես իմանում։

Սրբ.—(զարմանալով) Ո՞վ չիմանում կարդալ, մայրիկ։

Մայրը.—Արշակը։

Սրբ.—Մայրիկ, լաւ գիտեմ կարդալ, բայց այս անգամ քէֆս տեղը չի։

Մայրը.—Լաւ, էդ թողնենք, ապա կարդաղ ես մի ռտանաւոր ասել։

Սրբ.—Ո՞ր ռտանաւորն ասեմ։

Մայրը.—Հէնց որը լաւ գիտես։ Հա, ասում էիր թէ՝ «Պարբերն» ռտանաւորը լաւ գիտեմ, ապա այն ասա։

Սրբ.—Գիտեմ, բայց... մայրիկ, էն լաւը չի։

Մայրը.—Ջատ լաւն է, դէ գիտես, ասա։

Սրբ.—(գլուխը քորելով) Մայրիկ, սկիզբը մտիցս ընկել ա։

Մայրը.—Լաւ, սկիզբը կըյիշեցնեմ քեզ։

Սրբ.—Գուցէ մի խօսք էլ մէջերքից մոռացած լինիմ։

Մայրը.—Այն էլ կըյիշեցնեմ։

Սրբ.—(Ձիչ լռութիւնից յետոյ) Մայրիկ։

Մայրը.—Հը։

Արշ.—Դրքի վրայ ասեմ, թէ բերանացի։

Մայրը.—Բերանացի ասա, բերանացի։

Արշ.—Բա իսկի գրքին չընայե՞մ։

Մայրը.—Ի՞նչ կարիք կայ նայելու. չէ՞ որ ասում էիր «Դարբինն» ոտանաւորը վարժապետի մօտ անսխալ ասել եմ։

Արշ.—Այ՛. բայց... (գլուխը քորելով)։

Մայրը.—Էլ ի՞նչ բայց... թէ գիտես, ասա էլի։

Արշ.—(մի կողմ) Նեղն ա լծել ինձ մայրիկս, սուտս բըռնելու ա (մօրը) —Դիտեմ, մայրիկ, բայց ամբողջը չըգիտեմ բերանացի։

Մայրը.—Վնաս չունի. ինչքանը գիտես, այնքանն ասա։

Արշ.—(հազալով) Ի՞նչպէս է սկսւում, մայրիկ.

Մայրը.—«Կըռանը ձեռքին, զնդանն առաջին».

Արշ.—(կրկնում է.) Կըռան ձեռքին, զնդանն առաջին. ը՛. Կըռանը ձեռքին, զնդանն առաջին... կըռանը ձեռքին, զընդանն առաջին...

Մայրը.—Քիթ երես մրոտ, դարբնոցի միջին.

Արշ.—(կրկն.) Քիթ-երես մրոտ, դարբնոցի միջին... ը... (կրկնում է մի քանի անգամ) Փուքսը փո՛ւհ հա փուհ, փչում է փչում, փուքսը փուհ հա՛ փո՛ւհ փչում է, փչում, փուքսը փուհ հա՛ փո՛ւհ, փչում է, փչում, փուքսը փո՛ւհ հ՛ա...

Մայրը.—Տօ՛, ի՞նչ ես փու հա փուհը քցել...

Արշ.—Մայրիկ, գրքի մէջ էդպէս է գրած։

Մայրը.—Ամօ՛թ քեզ, չես իմանում, և ուզում ես ինձ հաւատացնել, որ այդ ոտանաւորը շատ լաւ գիտես։

ՏԵՍԻԼ Բ.

Նոյեմբ եւ Նազիկ.

Նազիկ.—(ներս է մտնում երկու խնձոր ձեռքին) Մայրիկ ջան, մայրիկ, գնացի Հօրեղբօրս տուն. տիկին Նազուն երկու խնձոր տուաւ, ասաց՝ մէկը դու վերցրու, մէկը տուր Արշակին. ա՛ռ Արշակ, տես ի՞նչ սիրուն է է։

Մայրը.—Ափսոս չէ որ այդ լինձորը նա ուտի, մի ոտանաւոր էլ չըգիտէ անգիր։

Նազիկ.—Ի՞նչ ոտանաւոր է, մայրիկ.

Մայր. «Պարբիւն» ոտանաւորը։

Նազ.—Կըռանը ձեռքին, դնդանն առաջին։

Մայր.—Չա՛, Նազիկս, դու գիտե՞ս, կարող ես ասել։

Նազ.—Ինչո՞ւ չըգիտեմ. գիտեմ, մայրիկ, կուզես ասեմ։

Արշակ.—(թթւած) Գիտեմ, գիտեմ. ի՞նչ գիտես, ես քեզանից լաւ գիտեմ։

Մայրը.—Ապա՛, Նազիկ, մի ամաչացրու նրան։

Նազիկը.—«Կըռանը ձեռքին, դնդանն առաջին
Քիթ-երես մրոտ դարբնոցի միջին,
Կաշւէ գոգնոցը առաջը կապած,
Լռիկ կանգնած է մեր Խաչօ դարբին։
Փուքսը փո՛ւհ հա փո՛ւհ, փչում է, փչում,
Կայծեր ու մոխիր...

Արշակ.—(մատը բարձրացնելով). Մայրիկ, միտս ընկաւ, ես ասեմ։

Մայրը.—Դէ՛ ասա։

Արշակ.—«Փուքսը փո՛ւհ հա փո՛ւհ փչում է, փչում, փուքսը փո՛ւհ հա փո՛ւհ փչում է, փչում, փուքսը փո՛ւհ հա փո՛ւհ ը՛ը՛...

Մայրը.—«Փո՛ւհ հա փո՛ւհ» անելուց բան չի դուրս գալ. Նազիկ, շարունակիր։

Նազիկ.—Փուքսը փո՛ւհ հա՛ փո՛ւհ, փչում է, փչում,
Կայծեր ու մոխիր դէս ու դէն փռում.
Երկաթի մի շերտ հնոցը կոխած,
Սաստիկ տաքից վառւում կարմրըում։
Խաչօն հանում է երկաթի շերտը
Զնդանի վրայ կռանով ծեծում.
Ձինում նրանից պայտ, մեխ ու կացին,
Եւ խոկոյն ջրի տաշտակը կոխում։

Մայրը.—Ապրիս, աղջիկս՝ այ այնպէս կասեն Է, անշնորհք։

Արշ.—Անշնորհքը ես չեմ, մայրիկ։

Մայրը.—Ապա ո՞վ է։

Արշ.—Նազիկն է։

Մայրը.—Երևում է, մի ոտանաւոր էլ չիմացար ասել։

Արշ.—Մ՛այրիկ, կուզե՞ս ուրիշ ոտանաւոր ասեմ։

Մայրը.—Դէ ասա։

Արշ.—(փող-լին). Բա Նազիկն ասի, ես չասե՞մ։ (Ասում է ձեռքերը շարժելով)։

Կրպօն խփէ, խէպօն խաղայ,
Ակլէ, տկլէ տրնազ է.
Էծիկ-մէծիկ բզէզ է,
Օ՛ֆ, տուֆ, նաղարա,
Հար բաբա Հարիսա.
Քաթիպի կոճակ
Պրնէ փլոճակ,
Ձրթ-պրրթ։

Մայրը.—Էդպիսի ոտանաւորներ ասելում լաւ ես։ Բաւական է, բաւական, Հանդիստ մնացէք մինչև գալս (դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ Գ.

Արշակ, Նազիկ եւ Տիգրան

Արշ.—Լա՛ւ, Նազիկ, կրտեսնես թէ՝ այսուհետև ո՛վ լաւ կրսովորի դասը. ես էլ քեզ պիտի ամաչեցնեմ։

Տիգրան.—(մտնելով). Բարև Նազիկ, բարև Արշակ. բա՛ ինչո՞ւ էք այդպէս լուռ ու մունջ կանգնել։

Արշ.—Ի՞նչ անենք։

Տիգր.—Ի՞նչ պիտի անենք. ամեն օր ինչ էինք անում։

Արշ.—Խաղում էինք։

Տիգր.—Դէ հիմա էլ խաղանք։

Արշ.—Ախր, ուզում եմ դաս սովորել։

Տիգրան.—Է՞, յետոյ կըսովորենք, Էլի. ես էլ դեռ չեմ սովորել։

Ըրշակ.—Լա՛ւ, խաղանք, խաղանք, խաղա՛նք. Նազիկ, դո՛ւ էլ կըխաղաս։

Նազիկ.—Ինչո՞ւ. չէ. դասս ես սովորել եմ արդէն, բայց ո՞րտեղ խաղանք!

Ըրշ.—Ո՞րտեղ պիտի խաղանք, այստե՞ղ։

Նազիկ.—Գնանք դուրսը խաղանք։

Ըրշ.—Մէկէլ ո՞վ է գնում դուրսը. այստեղ լաւ է։

Նազիկ.—Ախը, փոշի կանենք այստեղ, մայրիկը կըբարկանայ։

Տիգրան.—Լաւ է ասում Նազիկը, էստեղ փոշի կանենք։

Նազիկ.—Ի հարկէ, փոշի կանենք. իսկ փոշին մեզ վընաս է։

Ըրշ.—(բարկացած) Էդ քո գործը չէ, դու սուս կաց. Էդ էլ էն չի, որ ասես թէ՝ քեզանից լաւ եմ սովորում։

Նազիկ.—Մայրիկն ինձ պատւիրել է, որ տանը չըխաղամ, ես մայրիկիս խօսքին կըլսեմ։

Ըրշ.—Դու չե՞ս ուզում ուրեմն մեզ հետ խաղալ։

Նազիկ.—Ուզում եմ, բայց ոչ սենեակում։

Ըրշ.—Դէ որ այդպէս է, գնա՛։

Նազիկ.—Առանց քո ասելու էլ ես պիտի գնամ մայրիկին ասեմ, որ Ըրշակը դաս չի սովորում, փոշի է անում։ (Դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ Դ.

Ըրշակ եւ Տիգրան

Ըրշ.—Տի՛գրան, ինչ խաղ խաղանք։

Տիգրան.—Ինչ ուզում ես, խաղանք։

Ըրշ.—Դեռ ա՛րի մի մի խնձոր ուտենք. (մօտենում են սեղանին և մի մի խնձոր վերցնելով կրծոտում)։

Ըրշ.—Մայրիկս, որ միշտ ինձ խնձոր տայ, դասերս լաւ կըսովորեմ։

Տիգր.—(ուտելով) Ընխելք, խնձորով պիտի դասդ սովորես: Ես կուզէի որ միշտ դաս լինէր, շատ կարդայինք, շատ բան սովորէինք. ես շատ եմ սիրում ուսումնարանը:

Արշ.—Ես էլ եմ սիրում ուսումնարանը, այնտեղ լաւ է խաղալու համար. բայց որ վատ թուանշան են դնում, մարդու սիրտը կոտրւում է. ուրիշ առարկաներից լաւ եմ, բայց Հայերէնից 2 ունիմ: Լսիր, Տիգրան. պարսկերէն համարեա չգիտեմ, բայց 4 են գրել:

Տիգրան.—Է՛հ. պարսկերէնը մեր ինչին ա պետք. Հայերէնը պիտի լաւ սովորենք, Հայերէնը... ես Հայերէն լաւ գիտեմ, բայց պարսկերէն այնքան չէ:

Արշ.—Ապա դո՛ւ լաւ գիտես պարսկերէն, թէ՞ ես:

Տիգրան.—Ի հարկէ ես:

Արշ,—Չէ, ներողութիւն, ես, քեզանից լաւ գիտեմ:

Տիգրան.—Ինչ որ էգպէս ես ասում, ես խօսքեր հարցնեմ, տեսնեմ կիմանաս:

Արշ.—Չէ, առաջ ես հարցնեմ:

Տիգրան.—Դէ լաւ, հարցրու:

Արշ.—Ապա ինչ կասեն գլխին.

Տիգր.—Գլխին կասեն... ը՛... սար.

Արշ.—Դեռ մի ժամ էլ մտածում ես, շուտ ասա էֆ:

Տիգր.—Աչքիս վրայ. շուտ-շուտ կասեմ:

Արշ.—Լա՛ւ. ապա մազերին ինչ կասեն:

Տիգրան.—(մտածելով) մազերին... ը՛.ը՛ մէս ա է. լեզուս ծէրին ա. (մի կողմ) Ի՞նչ եմ երկար մտածում: (Արշ.-ին) Արշակ, գիտե՞ս մազերին ինչ կասեն:

Արշ.—Չ՛ը, ինչ կասեն:

Տիգր.—Մազերին կասեն՝ սարախոտ:

Արշ.—(ծիծաղ) Չա՛, հա, հա՛. լաւ պարսկերէն ա: Ճակատին ապա ինչ կասեն:

Տիգր.—Սարադաշտ:

Արշ.—Աչքերին:

Տիգր.—Սարածակեր:

Արշ.—(գլուխը շարժ. ժպտ.) Լաւ, լաւ. ականջներին:

Տիգր.—Սարապըտրհան:

Արշ.—Քթին:

Տիգր.—Սարապըզզզ:

Արշ.—Բերանին:

Տիգր.—Բերանին կասեն սարածամծամ:

Արշ.—(մի կողմ) Էդ բադդախի պարսկերէն է հա:—Տիգրան, բա վզին ինչ կասեն:

Տիգր.—Դէ վզին էլ կասեն՝ սարակոթ:

Գ. ՂԱԶԱՆՑԱՆՑ

(Արշարունակի.)

«Եր ասում են կերակրեմ»

ՀԻՆԱՒՈՒՐՑ ԿԱՂՆՈՒ ՋՐՈՑՑՆԵՐԸ

(Փոխադրութիւն)

Չ-չ-չ՛... Սուսս՛... Լսեցի՛ք, —աղմկում էին կանաչ եղևնիները, խուճուճիկ թխտենիները, դղրդոջուն կաղամախիները...

—Լսենք, լսենք!

Եւ հինաւուրց կաղնին հպարտութեամբ շարժեց հզօր գագաթը, նշան տալով դրացիներին, որ լռեն:

Անտառի բուսականութիւնը միանգամից հանդարտուց: Խուճուճիկ թխտենիները համարեա մինչև գետին կախեցին իրանց բոժոժիկները. մատաղ եղևնիները նոյնպէս հանդարտեցին և ականջները սրեցին, իսկ կաղամախին հետաքրքրութիւնից ամբողջովին դողդողաց իր գունատ տերևներով: Միայն մատաղ սոճիները սուս ու փուս ծիծաղում էին և թեթևակի շարժում իրանց բաց-կանաչ կատարները. կարծես ուզում էին ասել, թէ—ինչ մի լաւ բան պիտի լսեն այդ պառաւից: Բոլոր ծառերը հաւաքւած էին հինաւուրց կաղնու շուրջը. նա ամենքից բարձր էր և դէպի ամեն կողմ հպարտութեամբ տարածել էր իր սաղարթախիտ ճիւղերը:

—Օ՜հ... բարեկամնե՛ր, իմ երկար կեանքի ընթացքում շատ բան է դլխովս անցել... Ես ծեր եմ, բայց արեգակը

ինձանից աւելի ձեր է... աւելի ձեր է նաև մայր երկիրը...

Կանաչագեղ սոճիները ծլնծաղեցին. «Տես, ի՞նչ նորութիւն ասաց պառաւը, իսկ մենք այդ չըգիտէինք»:

—Ի՞նչի էք ծլնծաղում, ծաղրածուներ: Մատաղ ոյժ շատ կայ ձեր մէջ, այդ պատճառով էլ դուք ուրախ ու զւարթ էք. բայց աւելի լաւ է ասացէք, ո՞րտեղից էք վերցրել դուք ձեր այդ ոյժը:

Սոճիները միմեանց նայեցին և ամաչեցին: Նրանք երբէք չէին մտածել, թէ ինչի իրանք ուրախ են, և ո՞րտեղից է իրանց ոյժը:

—Հապա՛... խշխշաց կաղնին:—Էհնց այն պատճառով էլ ես խօսք բացի արեգակի և Հողի մասին, որ մենք նրանցով ենք միայն կենդանի, որ նրանցից ենք ստանում մեր ամբողջ ոյժը: Ձեր ոստերն ու ճիւղերը փշերով են ծածկւած, իսկ թխտենիների, կաղամախիների և իմ, ծերուկիս, ոստերը տերևներով են ծածկւած,—ձեր կարծիքով ինչի այդպէս է:

—Դա գեղեցկութեան համար է, պապի, մէկ էլ ուրախութեան համար. մեր գաղաթներով մենք դէպի երկինք ենք նայում, իսկ տերևիկներով զմայլւում ենք արեգակի վրայ, նրա ջերմագին զուրգուրանքն ենք ընդունում, հանաքչի քամու հետ ենք խաղում...

—Գեղեցկութեան համա՞ր, ինչ ասել կուզէ... Ա՛յ, դուք կանաչ գլուխներ!... Էհնց բանը նրանումն է, որ գեղեցկութեան համար չի, այլ նրա համար, որ ծառերը արեգակից իրանց համար ոյժ ստանան: Երկրի վրայ գոյութիւն ունեցող կեանքը ամբողջովին կախւած է արեգակից. առանց նրան՝ մենք չէինք կարող ապրել, իսկ առանց բոյսերի չէին կարող ապրել ո՛չ գաղանները, ո՛չ թռչունները և ո՛չ մի այլ շնչաւոր...

—Պատմի՛ր, պատմի՛ր, հետաքրքիր է:

—Այ՛, ամեն բան արեգակից է կախւած: Վերցնենք, օ-

բինակի համար, թռչունը: Ի՞նչով է նա կերակրւում: Եթէ նա գիշատիչ թռչուն է, ուրեմն նա ուրիշ թռչնակների կամ փոքրիկ կենդանիների մսով է կերակրւում: Իսկ եթէ գիշատիչ չէ,—մեղուկները, թիթեռները, բզեզները, որդեր և թրթուռներ է որսում, կամ բոյսերի սերմեր է կոցահարւում. իսկ բզեզներն ու թրթուռները մեր տերևներով ու կպեճներով են կերակրւում. թիթեռներն ու մեղուները մեր ծաղիկների քաղցր հիւթն են ծծում: Նոյնպէս և ամեն մի գազան, եթէ նա բոյսերով չէ կերակրւում, ի հարկէ ուրիշ կենդանիների մսով է կերակրւում, իսկ վերջիններս այսպէս թէ այնպէս բոյսերով են ապրում: Ուրեմն բոլոր կենդանիներին բոյսերն են կերակրում իրանց պտուղներով, կպեճով, տերևներով: Իսկ մեր այս բարձր բները արեգակն է դաստիարակել: Ահա այդ պատճառով եմ ասում, թէ երկրի վրայ գոյութիւն ունեցող կեանքը ամբողջովին կախւած է արեգակից:

—Տարօրինակ է: Արեգակը մեզանից շատ հեռու է գրտնւում. նա միայն տաքացնում և լոյս է տալիս մեզ, ուրիշ ոչինչ: Այդ ինչպէս է, որ տաքութիւնից, մէկ էլ լոյսից կարող է ծառ գոյանալ. զարմանալի է...

—Մենք շտապելու: Լուրջ գրոյցը կարգ ու կանոն է սիրում: Ի հարկէ, լոյսից չես կարող ծառ ստանալ,—ես ասացի, թէ մենք արեգակով ենք ստեղծւած, իսկ թէ ինչից,—դրա մասին յետոյ կը խօսեմ:

—Փէ հապա ինչից:

—Ասացի, թէ դրա մասին յետոյ կը խօսեմ: Սկզբից դուք պէտք է իմանաք, թէ ինչից ենք մենք բաղկացած: Դժւար է դա բացատրել, բայց և այնպէս կը փորձեմ,—միայն ուշադրութեամբ լսեցէք: Յիշո՞ւմ էք, թէ ինչպէս անցեալ ամառ մարդիկ այս տեղ կուլը էին պատրաստում:

—Յիշում ենք, յիշում,—յուզւեցին սոճիները, որոնց կե-

ղևով կարծես սարսուռ անցաւ, երբ լիշեցին այդ սարսափելի բանը:

—Յիշում էք, երբ փայտը վառւեց, ինչ մնաց տեղը:

—Ի՞նչ պիտի մնար: Բոլորը այրւեց, միայն ածուխ ու մոխիր մնաց...

—Հէնց ածուխի մասին էլ ուզում եմ պատմել ձեզ: Ամեն մի կենդանի մարմնի մէջ, լինի նա բոյս, թէ շնչաւոր կենդանի, անշուշտ ածուխ կայ. չկայ մի կենդանի մարմին, որ առանց ածուխի կարողանայ ապրել, կեանք ունենալ: Սակայն փայտի մէջ ածուխը իրանուզլխու չէ, այլ միացած է ուրիշ զանազան նիւթերի հետ: Այդ պատճառով էլ նայելով ծառի վրայ՝ չի կարելի միանգամից դուշակել, որ նրա մէջ ածուխ կայ. բայց թէ ծառի մէջ՝ բացի ածուխից՝ ուրիշ բաներ էլ կան,—այդ նոյնպէս տեսել էք. ծառից մարդիկ կուպր Հանեցին, որը ածուխի նման չէ: Ճշմարիտ է, կուպրի մէջ էլ ածուխ կայ, բայց նա խառն է ուրիշ նիւթերի հետ: Այդ այն նիւթերն են, որոնցից բաղկացած է ջուրը: Ի Հարկէ, դուք տեսաք, թէ ինչպիսի թանձր ծուխ էր բարձրանում, երբ ծառերն այրւում էին:

—Տեսանք, տեսանք:

—Ուրեմն ծառի մէջ՝ բացի ածուխից և կուպրից՝ կան և թռչող, բարձրացող նիւթեր, կամ գազեր, ինչպէս նրանց անւանում են գիտնական մարդիկ: Ծխի մէջ էլ շատ ածուխ կայ, ամենաբարակ, ամենանուրբ փոշու նման, որ մուր է կոչւում: Եթէ ծուխը մաքրենք մրից,—այն ժամանակ նա կդառնայ նոյնքան անգոյն, թափանցիկ, որպէս օդն է. գիտնականները այդ գազը անւանում են ածխաթթու: Ահա այդ գազից է արեգակը կազմում մեր մարմինները:

—Ծխից ինչպէս կարող է ծառ բանիլ. ծառը կարծր մարմին է, իսկ ծուխը—թռչող մարմին է, կամ ինչպէս դուք ասացիր, գազ է:

—Այո, այդ անգոյն, թափանցիկ գազից, ածխաթթուից,

արեգակը ծառեր է շինում... Ածխաթթուն պարզ մարմին չէ, այլ բաղադրեալ մարմին է. նա բաղկացած է ածուխից և էլի մի թռչող գազից, որի անունը թթուածին է: Թթուածին գազը՝ օդի գլխաւոր և կարևոր մասն է: Առանց թթուածնի՝ ոչ կենդանիները և ոչ բոյսերը չեն կարող ապրել: Թթուածնի և ածուխի միանալուց գոյանում է ածխաթթու, որից արեգակը շինում է մեր մարմինները: Իսկ մեր տերևներն ու փշերը իբրև արհեստանոց են ծառայում արեգակի համար: Ինչ է կատարում այդ արհեստանոցում: Լսեցէք և կ'իմանաք:

...Տերևների և փշերի մէջ մի առանձին կանաչ նիւթ կայ, որը օդից դէպի տերևներն է ձգում ածխաթթուն և արեգակի ճառագայթների օգնութեամբ ածուխը բաժանում է թթուածնից: Թթուածինը էլի յետ է դնում, օդի հետ խառնւում, իսկ ածուխը մնում է տերևների մէջ և միանում է այն նիւթերի հետ, որոնցից բաղկացած է ջուրը: Ածուխի և այդ նիւթերի միացումից ստացւում է այն բաղադրութիւնը, որից կազմւած է ծառը: Ամենից առաջ օսլայ է գոյանում (միայն մի քանի բոյսերի մէջ օսլայի փոխարէն շաքար է գոյանում): Օսլան բոյսի համար այնպիսի կերակուր է, առանց որի նա չի կարող ապրել:

Եթէ մարդիկ բոյսը զրկեն լոյսից և թողնեն, որ նա ապրէ մութ տեղում,—տերևների կանաչ նիւթը կդադարէ օսլայ պատրաստելուց, որովհետև այդ արհեստանոցի մէջ աշխատող բանւորը արեգակի ճառագայթն է: Բայց, այսպէս թէ այնպէս, բոյսը, պէտք է կերակրւի, սնունդ ստանայ: Այդ պատճառով նա սկսում է կլանել օսլայի այն պաշարը, որը, հաւաքել էր նրա տերևների մէջ այն ժամանակ, երբ նրա վրայ նայում էր պայծառ արեգակը: Կամաց-կամաց պաշարն էլ ըսպառւում է, և եթէ մարդիկ շարունակին թողնել բոյսը մութ տեղում, նա կըսկսի քաղցել և վերջապէս, սովամահ կըլինի:

Այդպիսով տերևները և բոյսերի բոլոր կանաչ մասերը ոչ

միայն իբրև արհեստանոց են ծառայում, որտեղ պատրաստւում է բոյսերի համար հարկաւոր նիւթը, այլև իբրև մառան է ծառայում, որտեղ այդ սննդարար նիւթից պաշար է պահւում սև օրւայ համար:

...Տեսնում էք, ուրեմն, ինչ հրաշքներ է գործում արեգակի լոյսը: Եթէ նա չըլինէր, բոյսերը չէին կարող իրանց համար օսլայ պատրաստել. բոյսերը կերակուր չէին ունենալ և այդ պատճառով չէին կարող ապրել. իսկ եթէ բոյսեր չըլինէին, կենդանիները էլ չէին լինիլ, որովհետև նրանք էլ կերակուր չէին ունենալ: Այդ պատճառով ասացի, թէ երկրի վրայ գոյութիւն ունեցող կեանքը ամբողջովին կախւած է արեգակից: Արեգակի լոյսի շնորհիւ՝ տերևները ներշնչում են օդից ածխաթթուն և արտաշնչում են թթուածինը. ապա ածխաթթուի մէջ գտնւող ածուխից և ջրից կերակուր են պատրաստում բոյսերը համար:

Հիմա մենք գիտենք, թէ որտեղից և ինչպէս է բոյսը ածուխ ստանում: Ածուխ հայթայթողը (ածխաթթուի ձևով) օդն է, ընդունողները,—տերևներն են, արհեստանոցը—տերևների մէջ պարունակւող կանաչ նիւթը, իսկ բանւորները—արեգակի ճառագայթներն են: Բայց չէ որ այդ իմաստուն կերպով շինւած արհեստանոցում, բացի ածուխից, ջուր էլ է պահանջւում: Որտեղից է ստացւում ջուրը:

Բնութիւնը հրաշալի ջրանցք է տարել դէպի ծառի արհեստանոցը:

—Տեսէք, դուք ձեր արմատները խորը թաղել էք խոնաւ հողի մէջ,—ինչ էք կարծում, ինչ նպատակով:

—Դա, երևի, այն նպատակով է, որ պինդ մնանք տեղերս կպած, որ քամին մեզ վայր չբձգէ:

—Ճիշտ է, մենք արմատներով պինդ բռնած ենք հողից, բայց ինչի համար պէտք է բռնել և կանգնած մնալ:

—Չա՛, լիշեցինք, լիշեցինք. գետնից մենք արմատներով հիւթ ենք ծծում, այժ ենք ստանում...

—Ա՛յ, դա ճիշտ է. սրմատներով մենք ձգում, վեր ենք քաշում հողից սննդարար նիւթը. բայց դրա մասին մենք ձեզ հետ մի ուրիշ անգամ կը խօսենք. հիմա շարունակենք մեր խօսքը ջրի մասին: Սրմատներով մենք այնքան չենք կերակրւում, որքան ջուր ենք վեր քաշում: Այդ ջուրը գնում է մեզ յայտնի արհեստանոցը: Տեսէք, բնութիւնը ինչպիսի լաւ ջրբանոց է շինել ամեն մի բոյսի մէջ:

—Մեր սրմատները, ինչպէս գիտէք, ճիւղաւորւած են, և որքան խորն են գնում հողի մէջ, այնքան աւելի և աւելի են բարականում նրանք, այնպէս որ նրանց ծայրերը համարեա մազի նման բարակ են: Ահա այդ մազային սրմատներն են հողից վեր քաշում հիւթերը: Սրմատների մաշկը շատ բարակ է, և հողի հիւթը հեշտութեամբ ներս է ծծւում այդ մաշկի միջով: Իսկ սրմատներից բնի երկարութեամբ մինչև ճիւղերն ու տերևները տարածւում են բարակ խողովակներ. այդ խողովակների միջով ջուրը սրմատներից բարձրանում է բնի և ճիւղերի վրայով և հասնում է մինչև տերևները, ուր, ինչպէս ձեզ յայտնի է, նրանից և ածուխից օսլայ է պատրաստւում:

—Ի՞նչի ջուրը վեր է գնում: Ո՞վ է նրան վեր բարձրացնում:

—Հապա՛, այդ ջրհան մեքենայի հունարը հէնց դրա մէջ էլ կայանում է: Այստեղ շատ պատճառներ կան. ես միայն մէկը ձեզ ցոյց կրտամ: Տերևների միջի ջուրը ամբողջովին չի գործադրւում, ամբողջովին չի միանում ածուխի հետ: Կէսից աւելին արեգակի ջերմութիւնից գոլորշիանում է և բարձրանում է օդը: Իսկ երբ այդ ջուրը գոլորշիանում է, ի հարկէ, էլ վերևից ներքև ճնշում չի գործում այն ջրի վրայ, որը փայտանիւթի խողովակներում է գտնւում. սրմատներն էլ այդ ժամանակ ծծում են Հա՛ ծծում խոնաւ հողի ջուրը. այդ նոր ջուրը վեր է մղում արդէն խողովակներում գտնւող ջուրը, որը բարձրանում է մինչև տերևները. այստեղ նրա մեծ մասը էլի

դոլորշիանում և բարձրանում է օդը, և էլի խողովակներով նոր ու նոր հիւթ է վեր բարձրացնում:

Դէ հիմա ասացէք, ինչէլ ձեր կատարները այդպէս բազմաճիւղ են: Ի՞նչի համար են ձեզ պէտք ոստերն ու ճիւղերը և այդքան էլ շատ:

Ի՞նչպէս թէ ինչի: Չէ՞ որ առանց ոստերի ու ճիւղերի մենք բոլորս էլ ինչ որ այլանդակ բաներ կըլինէինք: Մեր մերկ բները ցցած կըլինէին դէպի վեր, և ոչ մի գեղեցիկ կամ ուրախ ու զարթ բան չէր լինել մեզ համար: Ուրիշ բաներ են ոստերն ու ճիւղերը. կարելի է աղմկել, միմեանց հետ շշնջալ. ասենք ուրիշներին էլ շատ օգուտ կայ մեզանից: Մեր հովանու տակ ամեն մի շինչաւոր էակ կարող է պատսպարուել արեգակի կիզիչ ճառագայթներից կամ վատ եղանակից, իսկ մեր ճիւղերում թռչուններն են թագնւում, որ կամ ձածկւին իրանց թշնամիներից, կամ իրանց որսը դիտեն և կամ բներ շինեն իրանց ձագուկների համար...

—Ճշմա-րիտ է,—վերևից բղաւեց յանկարծ պառաւ ցինը, որը վաղուց սկսել էր նիրհել՝ նստած լինելով կաղնու կորացած ոսկի վրայ և լսելով նրա իմաստալից ճառերը:

Նա չէր հաւատում կաղնուն, որ ծառերը հէնց իրանց համար են ապրում:

—Ի-րա՛ւ է,—կրկնեց ցինը,—ամբո՛ղջ անտառը մեզ համար է, ամբո՛ղջ աշխարհը մեզ համար է!...

—Կողոպտում են, կողոպտում են!.—կատաղութեամբ բղաւեց ցինը, արագութեամբ պոկ եկաւ տեղից և քարի պէս թափով ընկաւ գետնին:

Այստեղ խլուրդի դիակի շուրջը մի խումբ բզեզներ չանասիրութեամբ և ոտների արագ շարժումներով աշխատում էին նախանձոտ հայեացքներից թագցնել իրանց թանկագին որսը: Նրանց էր որ նկատեց պառաւ ցինը և նկատեց հէնց իր ժամանակին, որովհետև մօտաւորապէս դիակի կէսը արդէն ծածկւած էր հողով:

Յինի երևալուն պէս խումբը անկարգ կերպով նահանջեց և որսը բաժին ընկաւ ցինին։

—Ա՛յ թէ աւազակ,—շշնջացին խուճուճիկ թխտենիները։ Կանաչ եղևնիներն էլ աւելի ցած կախեցին իրանց փշոտ ճիւղերը. մատաղ սոճիները միայն շարժեցին իրանց գեղեցիկ կատարները, իսկ դողդոջուն կաղամախին զայրոյթից սկսեց ամբողջովին դողալ։

Միայն Հինաւուրց կաղնին էր անվրդով կերպով կանգնած։

—Ինձ չափ ապրեցէ՛ք,—ասաց նա,—և կրտեսնէ՛ք, որ աշխարհումս յաճախ այդպէս է լինում. միմեանցից խլում են որսը, շատ անգամ նոյն իսկ կեանքը...

...Լսեցի՛ք, ինչպիսի դատողութիւններ էր տալիս ցինը։— Նա այնպէս է կարծում, թէ ամբողջ աշխարհը միայն իր համար գոյութիւն ունի։ Ձատերը այդպէս են մտածում, միայն ամենքն էլ սխալւում են. ամեն մէկն էլ ուզում է ապրել, և չի կարելի իր տիրապետութեան տակ առնել ամբողջ աշխարհը։ Ի հարկէ, ամեն մէկը պէտք է մտածէ իր մասին, բայց չը-պէտք է ուրիշներին զրկել։

—Ա՛յ, քիչ առաջ դուք ասում էիք, թռչնի համար շատ յարմար է թագնուել մեր խիտ սաղարթի մէջ,—դա այդպէս է, թող թագնուեն, որքան ուզում են։ Բայց իսկապէս մեր ինչին է հարկաւոր այսքան շատ ոստեր ու ճիւղեր ունենալ։ Ասացէք տեսնեմ, ինչ է ընում ձեր ոստերի վրայ։

—Տերևները,—շշնջացին խուճուճիկ թխտենիները։

—Փշե՛ր, փշատերև,—խմբով ձայն տուին եղևնիներն ու սոճիները։ Կաղամախին էլ ուզում էր ինչ որ բան ասել, բայց յուզմունքից ծամծմորեց խօսքերը, և ոչինչ չըհաոկացուեց։

—Այդպէս է. բայց ինչի համար են մեզ պէտք տերև-ները ու փշատերևները։

—Որ օդի մէջից ածխածին ընդունեն, նրանից ածուխը ջոկեն և ածուխից ու ջրից օսլայ պատրաստեն. իսկ օսլայից

ծառը կըպատրաստէ այն բոլորը, ինչ որ Հարկաւոր է իրան: Ուրեմն լաւ չէ, որ ծառը շատ ոստեր, ճիւղեր ու տերևներ ունենայ:

—Ի հարկէ լաւ է. որքան տերևները շատ լինին, այնքան աւելի տարածութիւն կըբռնեն օդի մէջ, իսկ որքան օդը շատ լինի, այնքան տերևները աւելի ածուխ կըպատրաստեն նրանից:

—Ճիշտ է: Այդ պատճառով էլ մեր ոստերն ու ճիւղերը տարածւում են դէպի վեր և զանազան կողմեր—դէպի արեգակի լոյսը, դէպի ազատ օդը. այդ պատճառով էլ մեր ճիւղերի վրայ այսքան շատ տերևներ և փշատերևներ կան:

—Հիմա, կարծում եմ, Հասկանալի կըլինի, թէ ինչի մեր արմատներն էլ գետնի մէջ տարածւում են դէպի զանազան կողմեր և խիտ կերպով ճիւղաւորւում են: Է՛լի նրա համար, որ աւելի շատ տարածութիւն բռնեն Հողի մէջ, աւելի շատ տարածութիւնից ջուր ծծեն և ուղարկեն դէպի վեր, դէպի ծառը... Երբ ծառը արմատներից այնքան ջուր և տերևներից այնքան ածուխ է ստանում, որքան իրան պէտք է, այն ժամանակ նա ապրում է ազատ և առանց կարիքի:

—Աչքի առաջ ունեցէք, որ Ջրից բացի՝ արմատները Հողից շատ քիչ ուրիշ բան են վերցնում: Համարեա բոլորը, ինչ որ մեզ պէտք է սնունդի և աճման համար, ստանում ենք օդից—ածուխի ձևով և Հողից—Ջրի ձևով: Մեր մարմնի բարդ բաղադրութեան մէջ 100 մասից 94-ը մենք ստանում ենք ածուխի և ջրի ձևով. մնացած 6 մասը միայն, կազմում են մեր կեանքի Համար անհրաժեշտ ուրիշ նիւթերը: Այդ պատճառով էլ մեզ ամենից շատ Հարկաւոր է, որ այն Հողը, որի վրայ մենք բսած ենք, լինի այնքան փափուկ, որ մեր արմատները ազատօրէն կարողանան տարածւել նրա մէջ, և այնքան խոնաւ, որ բաւականաչափ Հիւթ տայ մեր արմատներին:

—Է՛, բարեկամներ, բեզարեցի պատմելուց, ժամանակ է արդէն քնելու,—տեսնում էք արեգակը մայր է մտնում:

Մի բոպէ ծառերը լռեցին, խորը մտածմունքի մէջ ընկնելով: Բայց ահա արեւմուտքից փչեց քամին, և սկսեց ծառերի սօսափիւնը. գեղեցիկ Թխտենին կանաչ խուճուճիկները օրօրեց. եղնջին ու սոճին փշապատ ճիւղերը խշխշացրին, վախկոտ կաղամախին վերից մինչև վար դողդողաց: Եւ նրանք բոլորը մի բանի մասին էին քչփչում.—շատ հետաքրքիր բաներ կան մեր կեանքում էլ, մեր շուրջն էլ: Որքա՜ն լաւ է ապրել այս լոյս աշխարհում, տաքանալ արեգակի ջիմայց. որքան լաւ է թարմանալ պաղ հիւթով, խնդալ ու կայտառ զրուցել ազատ քամու հետ, նրան հրաժեշտի ողջոյն տալ մուխ գիշերին և մինչ առաւօտ նիրհել խաղաղ քնով, մինչև որ հրաշագեղ արշալոյսը մեզ ողողէ շողակնեայ ցօղով, մինչև որ վաղորդեան ժամին արթնացնէ և նոր աշխատանքի հրաւիրէ մեզ ծագող արեգակի շոյիչ ճառագայթը...

Չարթնացին քամին հրաժեշտ տւեց կանաչազեղ անտառին և թռաւ—անցաւ դէպի լայնարձակ դաշտավայրը... Եւ ամբողջ անտառը քուն մտաւ...

Ջ. Տ.-ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. 3. Մարուքեանցի.

1) Վերցրէք մեր մարմնի մասերից մէկը, յետոյ Հայաստանի քաղաքներից մէկը, այդ երկուսը կպցրէք միմեանց, կըստանաք մի զարդ, որով երկու արարած բարեկամութեան դաշն են կապում իրար հետ։

—

Առաջ. Նոյնի։

2) Վերցրէք մի տառ, մօտը դրէք մի թուանշան,
Դրա մօտ էլ—կառքերի մասը կազմող մի բան։
Կըդառնայ մի թռչուն։
Եթէ սկզբից երեք տառ կարդանք, է մի ուտելիք,
Իսկ եթէ վերջից երեք տառ—քաղցր խմելիք։

—

3) Առաջ. Ա. Ջահ-Մուրադի.

Մէկից մինչև տասնևվեց թուանշաններն՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, տեղաւորացնել հետևեալ քառակուսիներում, այնպէս որ վերևից՝ ներքև, ձախից աջ և անկիւնից անկիւն կարդալիս թուանշանների գումարը տայլի 34. և իւրաքանչիւր թուանշան կրկնուի մէկ անգամ և ոչ աւելի։

———

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Աղբիւրի № 7-ի հանելուկների բացատրութիւնը

—

3. Մարութեանցին՝

Ձեր գրաքառ խօսքն է արդ,
ժամանակը որոշող.
Ը-ով կեանքը մաշող դարդ.
Կանանց սիրելին է զարդ,
Որոշ ուղղութիւնն է հարդ (թ),
Անաստուն կերն է յարդ.
Անգործ մարդոց խաղալիկ
Է գոյնզգոյն սիրուն նարդ,
Անուշահոտ ու գեղեցիկ
Ծաղկանց թագուհին է վարդ.
Իսկ ձեր փոքրիկ որսորդը
Ոստայն հիւսող անկուշտ սարդ։

Մոսկուա **Խ. Տէր-Ալագեանց**

—

Աղբիւր № 7-ի հանելուկները վճռել են պ. պ. Ձւոտ, Բագր. Մկրտումեանց, Վրոյր Ֆ. Մեծատուրեան (Պարիզից), Զարմայր Տէր-Կարապետեանց և 3. Մարութեանց (1 և 2)։

Ժամանակաւոր խմբագիր՝ բժիշկ ԱՐՏԱՇԷՍ ՁԻՍԵԱՆ
Հրատարակիչ՝ ՏԻՓՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ

ԵՐԻՒՆՊ ՉՈՒՀԱՋԻՋԻ

Նոր-Նախիջեւանի Ս. Խաչ վանքը

(արտ. „Լուսոյ“ հանդիսից)

Գինն է 40 կոպեկ

Լոյս տեսաւ

Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Բժշկի զրոյցներ։ № 2

«ՎԱՏ ՅԱՒԻ»

Գինն է 6 կոպ.

Նոյնպէս տակից գուրս եկաւ

Վ. Փափազեանի

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Գինն է 50 կոպ.

Վաճառւում է Թիֆլիսի կենդրոնական գրավաճառանոցում։

ԱՐԱՐԱՏ

1901

ՍԻՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՒ

Բաժանորդագինն է Թուսիայում 4 րուբլի, արտասահման 5 րուբլի։

Խնդրում ենք բաժանորդներին յայտնել իրանց ճիշդ հասցէները.

Հասցէն՝ Св. Эчміадзинъ. Типографическому Комитету, արտասահանի համար Rédaction de la Revue «Ararat». Etchmiadzine (Caucase.)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Բառոյական, ուսումնական, արուեստական քննրը

Տարեկան բաժանորդագինն է 10 Ֆր. —4 րուբլի։

Հասցէն A la Rédaction de la Revue «Hantesse» Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse, 4.

ԱՏՐՊԵՏԻ

«Ալմաստ» վէպ բարձր-Հայոց կեանքից. գինն է. . . . 2 ր.

«Խ ւ-կարապետ» վէպ Հայ կաթոլիկների կեանքից . . . . 1 ր.

«Քոռ Եղիկ» վէպ շիրակ. կեանքից. . . . . 30 կ.

Ջնջոց վէպ Սազի գիւղացիների (Թրքահայերի) իրական կեանքից . . . . . 30 կ.

Ժառանգներ Քղի գաւառի (Թրքահայերի, կեանքից. . 30 կ.

«Ջուբան» պիէսերգ. օպերայի համար Թիւրքահայոց կեանքից . 1 ր.

«Սարոփ» ողբերգութիւն տաճկ. պատ. կեանքից . . . 30 կ.

Հերսայի Առաքելը Թրքահայերի կեանքից . . . . 30 կ.

Գիմել Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցին եւ Կովկասի բաղմաթիւ հայ գրավաճառներին։

Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս. Въ Нахичевань н-Д, въ Типографію Бр. Аваковыхъ, **որտից կրլինի սովորական զիջումն։**

35—34